6363

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Մ. Ն. ԱՄԵՐԻԿԱՅԻ

1927

267
Ա-34

267
Ե-39.

1 OCT 2009

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ
Բոստոն, Մէս.

Թիւ 525 21 *Փետրուար*, 1927

Մեր Սիրելի Զաւակներուն

Մեր տեւական և անմիջական հոգերէն մին եղած է եւ է ի մի բերել Մեր Երիտասարդ սերունդը Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ և Անոր հովանիին տակ, կրկին նպատակով.–Դաստիարակել նոր սերունդը Մեր Ս. Եկեղեցւոյ վեհ ու նուիրական ոգիով և զօրացնել կապն ընդ մէջ Ամերիկայի Հայոց և Հայութեան մեծ զանգուածին յարատեւման։

*Տարիներ շարունակ հրահրած, քարոզած և արծարծած ենք այս Գաղափարը եւ այսօր ուրախ ենք որ Ան կ'իրականանայ Նիւ Եորկի և Ֆիլադելֆիոյ մէջ, գրեթէ միաժամանակ, կազմութեամբ Միութեան մը որ կը կոչուի «**Եղբայրակցութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ**», և որ ստացած է կենսունակ ու տեւական հաստատութեան մը բնոյթը, գրոյս կցուած ուրոյն Սահմանադրութեամբ մը։*

Եղբայրակցութիւնն, իր առաջին իսկ քայլերուն մէջ, գտած է համակրական ընդունելութիւն երկու քաղաքներուն մէջ ալ, բարեկիրթ ուսեալ աղգայիններ ար-

05 APR 2013

6363

դեն Աստուծոյ անոր և կը շարունակեն միանալ։ Լիայոյս ենք թէ ընդ հուպ ան պիտի ծաւալի մեր բոլոր համայնքներուն մէջ և իր կրթիչ ու ազնուացնող ոգին պիտի ներշնչէ մեր երիտասարդութեան ամէնուրէք, առանց խտրութեան սեռի։

Այս նպատակով ու ակնկալութեամբ կը յանձնարարենք մեր բոլոր Պատուական Պաշտօնեաներուն, մեծարոյ Հոգաբարձութեանց, համայնքներուն, ինչպէս և բոլոր Եկեղեցասէր, Ազգասէր և Կրթասէր անձերուն, բերել իրենց աջակցութիւնը այս Նորահաստատ Միութեան, կազմել ու կազմակերպել ամէն տեղ «Եղբայրակցութիւններ Հայաստանեայց Եկեղեցւոյ», որպէսզի Ամերիկահայ Նորահաս սերունդը գայ ու փարի իր մօր, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, և Անոր հովանիին տակ սովորի յարգել ու սիրել Հայութեան անցեալը, Դիրն ու Լեզուն, պահէ ու պահպանէ իր Հօրենական ժառանգութենէն ինչ որ ազնիւ է, վսեմ ու գեղեցիկ և զուգորդէ զայն իր հաւատարմական զգացումներուն հանդէպ իր Նոր Հայրենիքին, Միացեալ Նահանգաց Ամերիկայի։

Հայրական Օրհնութեամբ

ՏԻՐԱՑՐ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կնիք Առաջնորդ Հայոց

ZUUՌ-ԱՐԽԻՎ

65489·67

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

—o—

ԱՆՈՒՆ

ՅՕԴ. Ա. Եղբայրակցութեանս անունն է «Եղբայրակցութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ», որը կը գտնուի Հայ Առաքելական Սբբազան Առաջնորդի հովանաւորութեան ներքեւ։

ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ. Բ. 1. Մշակել անդամներու միջեւ Քրիստոնէական կեանքի գաղափարականը, եղբայրական վերաբերում իրարու և Մայր Եկեղեցւոյ հանդէպ անձնուիրութեան, սիրոյ և ծառայութեան ոգի։

2. Վառ պահել գիտակցութիւնը մեր տոհմային փառաւոր կրօնական և կրթական ժառանգութեան, որ ամփոփուած է Մեր Եկեղեցւոյ, Ազգային Պատմութեան և Լեզուին մէջ։

3. Կեդրոնացնել Հայ Երիտասարդութեան Հոգեւոր, Մտային և Ընկերային ոյժերը նպատակայարմար գործունէութեան շուրջ, ինչպէս նաև Ֆիզիքական

ւոր Հովիւը, որպէս իւր փոխանորդը ժողովներու նախագահողն է անոր բացակայութեան։

Միւս պաշտօնեաներն են՝ Ատենապետ, Փոխ-Ատենապետ, Ատենադպիր և Դանձապահ որոնք կ'ընտրուին տարուէ տարի գործօն անդամներու ցանկէն։

Այս ընտրութիւնները կը կատարուին Յունվար ամսոյ եղբայրակցութեան տարեկան ընդհանուր ժողովին մէջ։

2. Եղբայրակցութիւնը պիտի ունենայ հինգ ցանձնախումբեր.—

Անդամական, Դրական-Կրթական, Ընկերային, Մարմնակրթական ու Տեղարուեստական։ Իւրաքանչիւրը բաղկացեալ 3-5 գործօն անդամներէ, որոնք ընտրական ժողովի մէջ, մէկ տարուայ պաշտօնավարութեամբ, կ'անուանուին Ատենապետին կողմէն։

3. Իւրաքանչիւր յանձնախումբ պիտի ընտրէ ինքն իւր մէջէն Ատենապետ, Ատենադպիր, իւր գործունէութեան հսկելու համար։

Դանձապահը ընդհանուր Դանձապահն է։

4. Ցանձնախումբերու Ատենապետները իրենց գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններ պիտի բերեն Վարչական ժողովին։

ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴ. Է. 1. Ատենապետ – Կ'ատենապետէ բոլոր ժողովներուն, կը կատարէ իր պաշտօնին վերաբերող բոլոր պարտականութիւնները, կը կանչէ ըստ հարկին արտասովոր ժողովներ։

Ատենապետ՝ ի բաց առեալ պաշտօնեաներու ընտրութեան համար քուէ չի տար, միայն երբ ժողովի քուէները հաւասարապէս բաժնուած ըլլայ՝ որոշիչ քուէն ինք կը ձգէ։ Նաև կը վաւերացնէ վճարուելիք հաշիւները և կ'ստորագրէ թղթակցութիւնները Ատենադպիրին հետ։

2. Փոխ-ատենապետ-կը կատարէ Ատենապետի պաշտօնին բոլոր պարտականութիւնները՝ ի դէպս Ատենապետի բացակայութեան։

3. Ատենադպիր – Ատենադպիրի պաշտօնն է վարել թղթակցութիւնները կանոնաւորապէս, արձանագրել ժողովին արարքը, պահել անդամներուն անուան ցանկը իրենց հասցէներով և անդամակցութեան թուականով։ Հոգ տանիլ եղբայրակցութեան գոյքերուն և զանոնք ամբողջութեամբ յանձնել իւր յաջորդին։

4. Դանձապահ- Դանձապահը եղբայրակցութեան դրամական գործերը կը վարէ և ստացականով կը գանձէ անդամավճարները և կը վճարէ Ատենապետէն վա-

ւերացուած բոլոր հաշիւները։

Ե. Եղբայրակցութեանս գրամները պիտի պահուին իւր անուամբ գրամատան մը մէջ։

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

ՅՕԴ. Ը. 1. Վարչական ժողով կը կազմեն Եղբայրակցութեան պաշտօնեաները, և Յանձնախումբերու Ատենապետները։ Այս ժողովը կը վարէ Եղբայրակցութեան գործերը և կը հսկէ ծրագրի կիրարկման։ Վարչական ժողովը կ'ունենայ առ նուազն նիստ մը ամէն ամիս։

Անդամական Յանձնախումբ - Այս յանձնախումբի պաշտօնն է —

1. Դանել և ժողովին ներկայացնել արժանաւոր թեկնածուներու անունները։

2. Ուսումնասիրել ներկայացուած թեկնածուներու յարմարութիւնը։

3. Հսկել որ անդամները կանոնաւորապէս յաճախեն ժողովներուն և Ատենադրպիրի ցանկին վրայ կրկնապէս բացակայ եղողներու մասին քննութիւններ կատարել և ըստ հարկին Վարչական ժողովին տեղեկացնել։

Գրական եւ Կրթական Յանձնախումբ։

Այս յանձնախումբին պարտականութիւններն են—

1. Կազմել և կառավարել Ընթերցատուն եւ Գրադարան մը։

2. Հրատարակել, երբ կարելի է Եղբայրակցութեան պարբերաթերթը։

3. Գրական-Գիտական և կրօնական երեկոյթներ սարքել և դասախօսներ հայթայթել։

4. Դասընթացքներ հաստատել, Մայրենի Լեզուի, Ազգային Պատմութեան բարի քաղաքացիութեան, առողջապահիկ գիտութեան և ուրիշ կրթիչ նիւթերու շուրջ։

Ընկերային Յանձնախումբ - Ընկերային յանձնախումբին պարտականութիւններն են —

1. Հաճելի և չինիչ ընկերային ժողովներ և երեկոյթներ սարքել օժանդակութեամբ Կրթական և Գեղարուեստական Յանձնախումբերու տարին գոնէ երեք անգամ. անդամներու և իրենց բարեկամներուն համար։

Մարմնակրթական Յանձնախումբ։

Այս յանձնախումբին պարտականութիւններն են։—

1. Անդամներու ֆիզիքական զարգացման սատարել։

2. Կազմել և կառավարել մարզարան մը։

3. Առողջապահական գիտելիքներ տարածել Անդամներու մէջ և ընդհանուր կերպով զօրացնելու ջանալ Առողջ եւ Մաքուր կենցաղի սկզբունքները։

Գեղարուեստական Ցանձնախումբ։

Այս յանձնախումբին պարտականութիւններն են —

1. Զարգացնել նախ անդամներու մէջ բոլոր գեղարուեստներու ճաշակը։

2. Հայ Գեղարուեստի մասին տեղեկութիւններ տալով անդամներուն, Հայ ժողովուրդին և օտար շրջանակներուն մէջ։

3. Դանել և քաջալերել անդամներու մէջ տաղանդները յօգուտ Եղբայրակցութեան և Եկեղեցւոյ։

ՕՐԱԿԱՐԳ

ՅՕԴ. Ժ. Դործի ժողովներու օրակարգն է հետեւեալը—

1. Բացման Աղօթք։

2. Ազգային Երգ։

3. Ներկայ բացակայ։

4. Նախորդ Նիստի ատենագրութեան վաւերացում։

5. Տեղեկատուութիւն Դանձապահի։

6. Տեղեկատուութիւն Ցանձնախումբերու։

7. Անկատար գործեր։

8. Թեկնածուներու ընտրութիւն։

9. Պաշտօնէից ընտրութիւն (Տարեկան)։

10. Փակման Աղօթք։

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՅՕԴ. Ժ. Սահմանադրութիւնն ու կանոնագիրը կը փոխուին ներկաներու երկու երրորդին քուէով, պայմանաւ որ նախորդ ժողովի մը մէջ գրաւոր կերպով ներկայացուած ըլլան առաջարկուած բարեփոխութիւնները և ժողովի հրաւէրագիրներու հետ հաղորդուին անդամներուն։

ՅՕԴ. ԺԱ. Երբ Եղբայրակցութեան անդամներուն թիւը հինգէն պակաս է լուծեալ կը համարուի և իւր գոյքերը և դրամը կը յանձնուի տեղւոյն Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատասխանատու մարմինին երկու օրինակ ցուցակով։

ՎԵՐՋ

Վաւերացուած Ամերիկահայոց Սրբազան Առաջնորդի Թիւ 2993, 17 Նոյեմբեր, 1927 Թուակիր Պաշտօնագրով։

— Ա. Զ Դ —

Սոյն Սահմ-Կանոնագրի օրինակէն ապահովելու և կամ այլ տեղեկութեանց համար հաճեցէք դիմել՝

Առաջնորդարան Հայոց Ամերիկայի

The Perlacy of the Church of Armenia
401 Shawmut Avenue
Boston, Mass.
U. S. A.

կամ

Եղբայրակցութեան Ատենադպիրին

Levon Zenian, Sec'y.
The Central Committee Brotherhood of the Church of Armenia
5829 Delancy Street
Philadelphia, Penna., U. S. A.